ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ԵՎ ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՀՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

ՀՀ գյուղատնտեսության ոլորտում 2014 թվականին գրանցվել են դրական տեղաշարժեր: ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալներով 2014 թվականի հունվար-նոյեմբերին գյուղատնտեսության համախառն արտադրանքի արժեքը կազմել է 920.7 մլրդ դրամ, որը գերազանցում է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը 6.5 %-ով:

Հաշվետու տարում շարունակվել են դրական տեղաշարժերը հողային ռեսուրսների, մասնավորապես վարելահողերի օգտագործման բնագավառում: Վարելահողերի նպատակային օգտագործման մակարդակը 2014 թվականին կազմել է 74.2 %, նախորդ տարվա 71.0 %-ի դիմաց:

Գյուղատնտեսության ոլորտում տնտեսավարողների ջանքերի և իրականացված մի շարք պետական աջակցության ծրագրերի արդյունքում գյուղատնտեսության արտադրության ծավալների ավելացումը հանգեցրել է երկրի համախառն ներքին արդյունքի մեջ գյուղատնտեսության ոլորտի տեսակարար կշռի որոշակի ավելացման:

<u>Բուսաբուծություն:</u> 2014 թվականին գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածությունները կազմել են 332.7 հազ. հա, նախորդ տարվա 318.1 հազ. հա-ի դիմաց: Ցանքատարածություններն ավելացել են 14.6 հազ. հա-ով: ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալներով 2014 թվականի հունվար-նոյեմբեր ամիսներին բուսաբուծության համախառն արտադրանքը կազմել է 593.0 մլրդ դրամ, որը գերազանցում է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը 5.8 %-ով: Ըստ օպերատիվ տվյալների, հացահատիկային և հատիկաընդեղենային մշակաբույսերի արտադրության ծավալը կազմել է 590.5 հազ. տոննա, որը գերազանցում է նախորդ տարվա մակարդակը 7.6 %-ով, այդ թվում՝ ցորենի արտադրության ծավալը կազմել է 338.2 հազ. տոննա՝ գերազանցելով նախորդ տարվա մակարդակը 8.5 %-ով: Խոտի կուտակման ծավալներն ավելացել են 3.7 %-ով: Գրանցվել է գրեթե բոլոր (բացառությամբ պտղի, որը հետևանք էր աննախադեպ ցրտահարության պատճառած կորուստների) մշակաբույսերի համախառն արտադրանքի աճ:

2014 թվականին իրականացվել են մի շարք ծրագրեր, որոնք ուղղվել են հանրապետության գյուղատնտեսության հողային ռեսուրսների նպատակային օգտագործման մակարդակի բարձրացմանը, հացահատիկային տնտեսության զարգացմանն ու հացահատիկային մշակաբույսերի ինքնաբավության մակարդակի բարձրացմանը: Նշված ծրագրերի և այլ միջոցառումների իրականացման արդյունքում, ըստ օպերատիվ տվյալների, աշնանացանի ցանքատարածությունները 2014 թվականին կազմել են շուրջ 110.0 հազ. հա, նախորդ տարվա 106.7 հազ. հա-ի դիմաց:

<u>Անասնապահություն:</u> 2013 թվականին անասնաբուծության ոլորտում կատարված դրական տեղաշարժերը նախադրյալներ ստեղծեցին 2014 թվականին նախորդ տարվա համեմատությամբ արձանագրելու բարձր ցուցանիշներ թե անասնագլխաքանակի, և թե անասնաբուծական մթերքների արտադրության և իրացման ծավալների ավելացման առումով: ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալներով 2014 թվականի հունվար-նոյեմբեր ամիսներին անասնապահության համախառն արտադրանքը կազմել է 327.7 մլրդ դրամ, որը գերազանցում է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը 7.8 %-ով: Ըստ օպերատիվ տվյալների, տարվա արդյունքներով մսի արտադրությունն ավելացել է 12.4, կաթինը՝ 9.3, ձվինը՝ 4.7 %-ով:

Անասնաբուծության խթանմանը նպաստել են վերջին տարիներին իրականացվող մի շարք պետական ծրագրեր: Մասնավորապես, **<<Տավարաբուծության զարգացման ծրագիրը>>:** Հանրապետություն ներկրված շվից, հոլշտին և սիմենթալ ցեղերի տոհմային երինջներից ստացվել են բարձր տոհմային և մթերատու հատկանիշներով օժտված, տեղի բնակլիմայական պայմաններին լավ հարմարվող բարձրարժեք տոհմային հորթեր, որոնցից շուրջ 1000 գլուխ վաճառվել են հանրապետության գյուղացիական տնտեսություններին: Տեղական վերարտադրության արդյունքում ստացված տոհմային երինջների խմբաքանակից 200 գլուխ վաճառվել է Վրաստանի Հանրապետությանը:

Զգալի առաջընթաց է նկատվում ոչխարաբուծության ոլորտում: 2014 թվականի դեկտեմբերի 1-ի դրությամբ արտահանվել է 131.0 հազ. գլուխ մանր եղջերավոր 2013թ. նույն ժամանակահատվածի 107.0 հազ. գլխի դիմաց:

Հանրապետության համար հեռանկարային է համարվում արդյունագործական ձկնաբուծությունը: 2014 թվականի 11 ամիսներին հանրապետությունում ապրանքային ձկան արտադրությունը կազմել է 11.5 հազ. տոննա, որը նախորդ տարվա ցուցանիշը գերազանցում է 27.7 %-ով: 2014 թվականի դեկտեմբերի 4-ի դրությամբ հանրապետությունից արտահանվել է 2505 տոննա ձուկ, նախորդ տարվա 2400 տոննայի դիմաց: 2014 թվականին արտադրության ծավալը, օպերատիվ տվյալներով, կազմում է շուրջ 14000 տոննա ձուկ և ձկնամթերք՝ գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը 22.0 %-ով:

<u>Բուսասանիտարիայի, անասնաբուժասանիտարիայի ոլորտ:</u> 2014թ. գյուղատնտեսական նշանակության հողատեսքերում իրականացվել է բուսասանիտարական մոնիթորինգ 244.4 հազ. հեկտար տարածության վրա: Նշվածի արդյունքները հիմք են ծառայել բույսերի պաշտպանության պետական ծրագրի մշակման և իրականացման համար: 2014թ. իրականացվել են 8.1 մլն պայմանական գլուխ կանխարգելիչ և ախտորոշիչ հակահամաճարակային միջոցառումներ:

<u>Գյուղատնտեսական հումքի մթերում, իրացում:</u> 2014թ. պտուղբանջարեղեն վերամշակող 41 և խաղող վերամշակող շուրջ 50 ընկերությունների կողմից մթերվել է շուրջ 232.1 հազար տոննա պտուղբանջարեղեն և խաղող, այդ թվում՝ 34.1 հազար տոննա բանջարեղեն, որից՝ 23.3 հազար տոննա լոլիկ, 13.9 հազար տոննա պտուղ և 184.1 հազար տոննա խաղող: Հաշվետու տարում պտուղբանջարեղենի և խաղողի մթերման ընդհանուր ծավալը նախորդ տարվա ցուցանիշը գերազանցել է 8.2 հազար տոննայով, կամ 3.6 տոկոսով: 2014թ. մթերված հումքի դիմաց վճարումները գրեթե ամբողջությամբ կատարվել են մինչև տարեվերջ: 2014 թվականին հանրապետությունից արտահանվել է 46.5 հազ. տոննա պտուղբանջարեղեն, խաղող և կարտոֆիլ: 2013 թվականի նույն ժամանակահատվածում արտահանվել էր 64.5 հազ. տոննա պտուղբանջարեղեն, խաղող և կարտոֆիլ: Հաշվետու տարում արտահանման ծավալների նվազումը 2013 թվականի համեմատությամբ պայմանավորված է

ծիրանի բերքի սակավությամբ, քանի որ նախորդ տարի արտահանված թարմ պտուղբանջարեղենի ընդհանուր ծավալի ավելի քան 36 տոկոսը կազմել է ծիրանը:

Գյուղատնտեսությունում կոոպերացիայի խթանում: Մշակվել է <<Գյուղատնտեսական կոոպերատիվների մասին>> ՀՀ օրենքի նախագիծը: Նախարարության խորհրդատվական համակարգի միջոցով աջակցություն է ցուցաբերվել գյուղատնտեսական գործունեություն իրականացնող կոոպերատիվների ձևավորմանը: Հաշվետու տարում աջակցություն է ցուցաբերվել թվով 16 գյուղատնտեսական կոոպերատիվների ձևավորմանը: «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» վարկային ծրագրի շրջանակներում հանրապետության 6 մարզերում ստեղծվել են շուրջ 90 արոտօգտագործողների սպառողական կոոպերատիվներ:

Գյուղատնտեսության ոլորտի մատչելի վարկավորում: Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ կառավարության կողմից հաստատված կարգին համապատասխան՝ գյուղատնտեսության ոլորտին տրամադրվել են մատչելի տոկոսադրույքով (14 %-ով) վարկեր, որոնց 4 տոկոսային կետը սուբսիդավորվել է, իսկ հանրապետության առավել կարիքավոր 225 համայնքների համար սուբսիդավորվել է վարկերի տոկոսադրույքի 6 տոկոսային կետը: 2011 թվականի ապրիլի սկզբից մինչև 2014 թվականի սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում գյուղատնտեսությունում տնտեսավարողներին տրամադրվել է 63.2 մլրդ դրամի 71.5 հազ. միավոր վարկ: Ընդհանուր առմամբ, վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման գումարը կազմել է 2.2 մլրդ դրամ:

Գյուղատնտեսությունում օգտագործվող ռեսուրսների մատչելիության բարձրացում:

<<Հողօգտագործողներին 2014 թվականի գյուղատնտեսական աշխատանքների համար մատչելի գներով ազոտական, ֆոսֆորական և կալիումական պարարտանյութերի ձեռքբերման նպատակով պետական աջակցության>> ծրագրի շրջանակներում շուկայականից 40-50 %-ով ցածր գներով մարզերում իրացվել է շուրջ 31 770 տոննա ազոտական, 1 174 տոննա ֆոսֆորական, 592 տոննա կալիումական պարարտանյութեր:

<<Հողօգտագործողներին 2014 թվականի գյուղատնտեսական աշխատանքների համար մատչելի գներով դիզելային վառելանյութի ձեռքբերման նպատակով պետական աջակցության>> ծրագրի շրջանակներում շուկայականից 25-26 %-ով ցածր գնով մարզերում իրացվել է 11 մլն 098.7 հազար լիտր դիզելային վառելանյութ:

Գյուղատնտեսության տեխնիկական հագեցվածություն: ՀՀ գյուղատնտեսության նախարարության նախաձեռնությամբ գյուղատնտեսական տեխնիկա արտադրող բելառուսական ընկերությունների հետ բանակցությունների արդյունքում 2013-2014 թվականներին հանրապետություն է ներկրվել և ՓՄՁ ԶԱԿ-ի միջոցով ուղղակի վաճառքի ու լիզինգային եղանակով շուկայականից անհամեմատ ցածր գներով տնտեսավարող սուբյեկտներին և անհատներին է տրամադրվել 288 միավոր <<ՄՏԶ 82.1>> մակնիշի տրակտոր, որից 168 միավորը՝ 2014 թվականին և 130 միավոր տարբեր գյուղատնտեսական գործիքներ: **<<Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության>>** վարկային ծրագրի շրջանակներում հանրապետություն է ներմուծվել և արոտօգտագործողների սպառողական կոոպերատիվներին է մատակարարվել 481 միավոր գյուղտեխնիկա, որից 122 անիվավոր տրակտոր: ՀՀ գյուղատնտեսության նախարարության նախաձեռնությամբ ՓՄՁ ԶԱԿ-ի միջոցով 2014 թվականին ներկրվել է 4 միավոր հացահատիկահավաք կոմբայն, և աշխատանքներ է տարվում ևս 8 միավորի ներկրման ուղղությամբ:

Գիտության և խորհրդատվության ոլորտներ: Հաշվետու ժամանակահատվածում նախարարության գիտական կազմակերպություններում գիտական հետազոտությունները հիմնականում ընթացել են գյուղատնտեսական մշակաբույսերի սելեկցիայի, սերմնաբուծության, համաշխարհային հավաքածուներից և գյուղատնտեսական հետազոտությունների միջազգային կենտրոնների սելեկցիոն տնկարաններից ստացված սորտերի, հիբրիդների ու սելեկցիոն գծերի, ինչպես նաև ոչ ավանդական մշակաբույսերի փորձարկման ու սելեկցիոն նպատակներով օգտագործման ուղղությամբ: Աշխատանքներ են տարվել նաև ԱՊՀ-ի և արտասահմանյան այլ երկրների գյուղատնտեսական հետազոտությունների միջազգային կենտրոնների հետ: Հաշվետու ժամանակահատվածում գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոնների կողմից կազմակերպվել և անցկացվել է ընդամենը 1094 սեմինար և 843 դաշտային ուսուցում, իրականացվել է 21822 խորհրդատվական միջոցառում, 151 փորձացուցադրական աշխատանք, եթեր է հեռարձակվել 87 ռադիոհեռուստահաղորդում: Տպագրվել և տարածվել է 448 անուն խորհրդատվական թերթիկ և գրքույկ՝ 113090 ընդհանուր տպաքանակով: Թողարկվել է 158 համար թերթ՝ 211.5 հազ. ընդհանուր տպաքանակով:

Վարկային ծրագիր: Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության ծրագրի **<<Համայնքների արոտավայրերի և անասնապահության կառավարման համակարգ>>** բաղադրիչով 2014թ. կատարվել են հետևյալ աշխատանքները՝ ՀՀ 6 մարզի (Արագածոտն, Լոռի, Շիրակ, Տավուշ, Գեղարքունիք, Սյունիք) ծրագրով նախատեսված 55 համայնքի փոխարեն աշխատանքներ են իրականացվում լրացուցիչ ևս 32 համայնքում, 18 համայնքում ավարտվել են արոտավայրերի ջրարբիացման համակարգերի շինարարական աշխատանքները (51 կմ ջրագիծ, 48 հատ խմոց), 9 համայնքում արոտավայրերի ջրարբիացման համակարգերի շինարարական աշխատանքները գտնվում են իրականացման փուլում (26 կմ ջրագիծ, 24 հատ խմոց), 39 համայնքի արոտօգտագործողների միավորում սպառողական կոոպերատիվներին տրամադրվել է շուրջ 190 միավոր գյուղտեխնիկա, այդ թվում՝ 57 անիվավոր տրակտոր և 133 միավոր այլ գյուղգործիքներ, 18 համայնքի 65 հա գյուղամերձ դեգրադացված արոտներում իրականացվել են վերականգնողական միջոցառումներ, 6 մարզերի 28 համայնքի համար ավարտվել են կերհանդակների քարտեզագրման, գնահատման և կենդանիների հերթափոխ արածեցման սխեմաների մշակման աշխատանքները: Աշխատանքներ են իրականացվել նաև <<Գյուղատնտեսությանն աջակցող ծառայությունների հզորացում>> և <<Մրցակցային դրամաշնորհների ծրագիր>> բաղադրիչներով:

ՀՀ գյուղատնտեսության նախարարության 2014 թվականի գործունեությունն ուղղված է եղել ոլորտի գերակա ուղղություններին համապատասխան՝ աշխատանքների իրականացմանը, ընթացիկ հիմնախնդիրների լուծմանը: